ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ մայիսի 11-ին տեղի ունեցավ Հ2 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ «Բ» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Հ. Սարգսյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Ծանոթացում գիտելիքների ստուգման ժամանակացույցին:Գիտելիքների ստուգմանը պատշաճ պատրաստվելու հարցը:
2.Ընթացիկ հարցեր

1.Լսեցին. Ծանոթացում գիտելիքների ստուգման ժամանակացույցին:Գիտելիքների ստուգմանը պատշաճ պատրաստվելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Հ. Սարգսյանը ևս մեկ անգամ ծնողներին հիշեցրեց, որ իրենց երեխաները ավարտում են տարրական դպրոցը և տեղափոխվում են միջին դպրոց: Կրթական մի աստիճանից մյուսը տեղափոխվելու համար հանձնում են ավարտական քննություններ , տարրական դասարաններում՝ գիտելիքների ստուգում << Մաթեմատիկա>> և <<Մայրենի>> առարկաներից: Ծնողներին ներկայացրեց գիտելիքների ստուգման ժամանակացույցը:

1. Մայրենի՝ 02.06.2018թ./թելադրություն/
2. Մաթեմատիկա՝ 05.06.2018թ. /թեստային աշխատանք/

Դասղեկը ծնողներին խնդրեց, որ լինեն ավելի հետևողական և ուշադիր, անեն ամեն ինչ, որ երեխաները չբացակայեն դասերից և ավելի լրջորեն պատրաստվեն, որպեսզի կարողանան լավագույնս ի ցույց դնել տարրական դասարաններում ձեռք բերած գիտելիքները:

Որոշեցին.
Լինել ավելի հետևողական և ուշադիր, որպեսզի պատվով հաղթահարեն այդ կարևոր և պատասխանատու խնդիրը:

2. Լսեցին.
Դասղեկը տեղեկացրեց, որ տարրական դպրոցը ավարտելուց հետո, աշակերտները տեղափոխվելով միջին դպրոց, պետք է ունենան միջին դպրոցի համար նախատեսված համազգեստ: Տարրական դասարաններում գրեթե խնդիր չեն ունեցել և չորս տարի կրել

են նույն համազգեստը, որը ծնողներին ազատել է լրացուցիչ ծախսեր անելու հոգսից տարվա բոլոր եղանակներին: Հիմա կա փոքրացած համազգեստները նորով փոխարինելու խնդիր, այսինքն պետք է ձեռք բերվեն միջին դպրոցի համազգեստներ: Այդ նպատակով մայիսի 17-ին դպրոց են հրավիրել դերձակին: Բոլոր ծնողներն այդ օրը լինեն դպրոցում, որպեսզի դերձակը իրենց ներկայությամբ վերցնի երեխաների չափսերը, պատվիրեն այն, ինչ իրենք են ցանկանում,/այսինքն ինչը ունեն, ձեռք են բերել, պետք չէ/,միայն համապատասխանի դպրոցի ներկայացրած պահանջներին:
Ապա դասղեկ Սարգսյանը խոսեց նաև <<Հրաժեշտ տարրական դպրոցին>> միջոցառում կազմակերպելու մասին: Ծանոթացրեց միջոցառման ծրագրին և հույս հայտնեց, որ կստանա ծնողների աջակցությունը, միջոցառումը պատշաճ ձևով կազմակերպելու գործում:
Ծնողները մեկ անգամ ևս հավաստեցին, որ համզգեստի կրումը դպրոցում արդարացված է. նույն համազգեստը ծառայում է մի քանի տարի, և ծնողին հեռու պահում ավելորդ ծախսերից:

Որոշեցին.
Ա.Կազմակերպված ձևով անցկացնել համազգեստների չափազնման և պատմիրման գործընթացը:

Բ. Օգնել դասղեկին,միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Մ. Ծառուկյան/
Քարտուղար՝ / Ա. Փանոսյան/